

կաններուն վրէժխնդրութեանը: Սուչովայի մէջ ամբողջ ջարդի եւ նախատինքի ենթարկեց հայերը»:

Իսկ Քամէնից տարեգիրքը, որ Լեհաստանի հայութեան տարեգրութիւնը կատարած ատեն չի մոռնար նաեւ Ռուսմանիոյ հայերը՝ այս վերջինները ենթակայ ըլլալով այն ատեն Կալչիոյ հայ արքեպիսկոպոսին, քիչ մը տարբեր կը պատմէ այս հալածանքը: Ան կ'ըսէ թէ Ալէքսանդր Լափուշնէանուն չար իշխան մըն էր, տասն անգամ աւելի անդուծ քան Յուլիանոսը եւ թէ հայերը կը տառապէին անոր իշխանութեանը տակ: Տարեգիրքը ընդհակառակը համակրութեամբ կը խօսի Տէսփօթ Վօտայի մասին, եւ անոր մէջ կը գտնէ հայոց պաշտպան մը: Տարեգիրքը ի վերջոյ կը յիշէ հայոց վիճակած չարչարանքը Տէսփօթի անկումէն յետոյ, Շթէֆան Թօմշայի օրով, երբ անմեղ հայեր կտորուեցան, երբ կախաղան հանուեցան Ծուռգտակ անուն վանական մը, եւ հայոց Խաչերես անուն պետը՝ երեք հայ կիներու եւ անոնց զաւակներու հետ:

Քսէնիօիւ (Istoria Romanilor) քաղերով օտար պատմիչներէ (Engel եւ Kazy) կ'ըսէ. «Լեհացիներուն հանդէպ Պօկտան Գ.ի (1568-1572), որ Ալէքսանդրու Լափուշնէանուի դաւանէն էր՝ տածած սէրը, իրեն շուրջ կը ըստեղծէր այն մեղադրանքը թէ միտում ունի կաթոլիկութեան յարելու: Յրուելու համար այդ գրոյցը, հետեւելով Շթէֆան Ռառէչի օրինակին, ան սկսաւ հալածանքի հայոց դէմ, դաւանափոխ ընելու համար գանոնք, նոյնիսկ խրելով անոնցմէ շատերուն կեանքը»:

ԵՐՐՈՐԳ. ՀԱԼԱԾԱՆՔ

Հայոց ենթարկուած երրորդ խտուրթիւնը Կէօրկէ Տուքա Վօյվօտին օրով էր, որ իշխանութիւն վարեց Երկիցս, 1668, 1672 եւ 1678-1684: Ծագումով ալպանացի էր այս վօյվօտը, բռնաւոր, ծարաւ դրամի եւ արեան: Ժողովուրդը չկրցաւ տանիլ անոր լուծը, եւ դաւադրութիւն մը սարքուեցաւ բռնապետին դէմ: Այդ դաւադրութիւնը, կ'ըսէ Հաչտէու, տեսակ մը ազգային շարժում էր: Շարժման պարագլուխն էր սէրտար Հընքուլ պօյէուը, որուն կը վերագրուի հայկական ծագում: Դաւադրութեան միացած էին նաեւ շատ մը հայեր, ո-

րովհետեւ Կէօրկէ Տուքայի երեսէն ենթարկուած էին ծանր տուրքերու: Չախողեցաւ սահայն դաւադրութիւնը, եւ խեղդուեցաւ Քիչնէյի մօտ տեղի ունեցած ընդհարումի մը մէջ: Տուքա, այս անգամ աւելի ամուր իր դահուն վրայ, բուն հալածանք մը մղեց բոլոր անոնց դէմ, որոնք մասնակցեցին իր դէմ կազմակերպուած դաւադրութեան: Միայն հայոց դէմ ուղղուած չէին խտուրթիւնները, բայց անոնք ալ ենթակայ եղան հալածանքներու: Այդ հալածանքը պահ մը այնպիսի խտուրթեան հասաւ որ շատ մը հայեր, 1671-ին, առաջնորդութեամբ իրենց Մինաս եպիսկոպոսին, որ կը նստէր Սուչովայի Չամքա վանքը, դիմեցին դադթի: Լեհաստան չէին կրնար երթալ, ուր Թորոսովիչ Նիկոլ եպիսկոպոսը հայերը բռնի նետեր էր արդէն կաթոլիկ եկեղեցիին դիրկը: Ստիպուեցան Թրանսիլլանիա անցնիլ, ուր ասպնջականութիւն դտան երկրին իշխաններուն կողմէ եւ ուր քիչ յետոյ հիմնեցին Կեռլան կամ Հայաքաղաքը:

Բոլոր այդ խտուրթիւնները, սահայն, վաղանցուկ էին եւ հայերը միշտ ալ վայելեցին քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներ, Մոլտովիչներուն հաւասար:

Կրօնական տեսլութիւնն էր միայն որ պաղութիւն կը ձգէր հայոց եւ ուսմէններուն միջեւ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

ՖԷՆԷՐՅԻ ՅՈՅՆԵՐՈՒՆ ՕՐՈՎ

Հայերուն կեանքը Ռուսմանիոյ մէջ անտանելի դարձաւ երբ Մոլտավիոյ իշխանական դահուն վրայ եկան բազմիւլ Ֆէնէրցի Յոյներ: Պոլսոյ Ֆէնէր յունաշատ թաղը նստող յոյն վաճառականներ էին ասոնք, որոնք Սուլթաններէն դրամով կը դնէին Մոլտավիոյ վօյվօտներուն դահը, եւ անգամ մը բազմած հոն՝ կը սկսէին կեղեքել տեղացի ժողովուրդը, թէ կարենալ վճարելու համար իրենց խոստացած կապալավարձը Սուլթանին եւ թէ հարստանալու համար իրենք: Ֆէնէրցիներու լուծը մօտ դար մը տեւեց, ԺԼ. դարու սկիզբէն մինչեւ ԺԹ. դարու առաջին քառորդը, եւ այս մէկ դարու ընթացքին, անոնք ծծեցին երկիրը, խնայելով միայն իրենց ցեղակից յոյներուն, որոնք սկսած էին զգալի կերպով բազմանալ, եւ տնտեսական նախանձելի դիրք ստեղծել: